

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

1905 թ. «Մուրճ»-ի բաժանորդագրութեան առիթով: Ներքին գործոց նոստրիսի հայեացքները եւ մամուլի ու հասարակութեան խանդավառ վերաբերմունքը:—Բարձրագոյն ուկազ ներք. գործ. միւնիստրի օգնականին:—Դատաստանական Պալատի միջանկի որոշումները:—Մանկեղականների սիմիւնարիա Թիֆլիսում: Դեպի նուխի եւ Ջուշի երկարուղի:

Բանալով «Մուրճ»-ի 1905 թուականի բաժանորդագրութիւնը՝ ամսագիրս մտնում է իր նոր շրջանի հինգ գերորդ տարին:

Չորս տարուայ անխոնջ դործունէութիւնը դրուած է մեր ընթերցող հասարակութեան առաջ, և նրա այն մասը, որ իրան նեղութիւն է տալիս նախ ճանաչել մի բան, ուշադրութեան առնել բոլոր հանգամանքները և ապա միայն կարծիք յայտնել—անշուշտ պէտք է նկատած լինի որ մենք աշխատել ենք մեր հանդիսի միջոցով ընթերցողին գիտակ դարձնել հայ ժողովրդի և նրա ցիրուցան հատուածների նկատմամբ, տեղեակ պահել նրան մեր հարեան ազգերի կեանքի վերաբերմամբ, հաղորդել նրան պետական կեանքում տեղի ունեցող երեւոյթների մասին և նրա մտքի առաջ պատուհան բանալ՝ համամարդկային կեանքի, գիտութեան և գեղարուեստի էվոլյուցիան դիտելու համար: Մենք աշխատել ենք համախմբել «Մուրճ»-ի շուրջը մեր գրական ոյժերը, միջոց տալ արտայայտուել իւրաքանչիւրին, ով նոր միտք և անկեղծ զգացմունք ունի: Խմբագրութիւնս նոյն ուղղութեամբ շարունակելու է իր գործունէութիւնը և ապագայում, եթէ միայն հայ հասարակութեան անկուլտուրական և անհոգ վերաբերմունքը նիւթական անյաղթե-

լի թումարեր չկանգնեցնի մեր առջև։ Իւրաքանչիւր լուրջ ընթերցող պէտք է մտածի որ ամենմի բարուրում այս հրատարակութեան թէ արտաքին և թէ ներքին կողմից յապուած է գլխաւորապէս բաժանորդագրութիւնից, իսկ մեղանում կրիայի քայլերով է աճում վճարող ընթերցողների թիւը. չորս տարուց յետոյ նա այժմ հազիւ է համում 900-ի, մինչդեռ—առանց խմբագրողի աշխատանքի վարձատրութեան մասին մտածելու—պէտք էր առնուողն 1000 տարեկան բաժանորդ ամագրիս անմիաս հրատարակութեան համար, պահպանելով որոշ ծաւալը և հոնորարի սկզբունքը։

Թէ մամուլը, թէ հասարակութիւնը և թէ ինքնավարական մարմինները խանդավառութեամբ վերաբերուեցին ներքին գործոց նոր մինիստր իշխ. Սվետոպոլկ-Միրսկու խօսքերին, որոնք ցոյց էին տալիս նրա ուղղութիւնը ներքին կարևոր հարցերի նկատմամբ. մամուլի, ինքնավարական վարչութիւնների և պետութեան ու ազգաբնակչութեան փոխադարձ յարաբերութիւնների մասին նրա արտասանած խօսքերը առիթ տուին մայրաքաղաքի թերթերին քննութեան ենթարկել Ռուսաստանի ներքին ցաւերը, դրանց դէմ դարման առաջարկել։ Ռուս մամուլի ամինալուրջ և հաստատամիտ օրգան «Русскія Вѣдомости»-ն հետեւալ կերպով ձևակերպեց հասարակական առաջադէմ խաւերի բաղձանքները. «Անհրաժեշտ է, որ մամուլին տրուէր պետական և հասարակական հարցերի քննութեան ազատութիւն, առանց նեղուելու ցենզ. կանոն. 140 յօդ.-ից (որով մամուլում չեն կարող քննադատուել պետական կարևորութիւն ունեցող հարցերը). անհրաժեշտ է որ զեմստվոյական ժողովները չափազանց սահմանափակումների չենթարկուէին պարապմունքների առարկայի, կարգի և եղանակի քննութեան մէջ. անհրաժեշտ է որ արգելքների չենթարկուէին զանազան նահանգների զեմստվային գործիչների խորհրդակցութիւնները, անհրաժեշտ է որ հեռացուէին բոլոր հետեւանքներով—այն միջոցները, որ ընդունուած էին գիտական Ընկերութիւնների, համագումարումների և այլ հասարակական կազմակերպութիւնների նկատմամբ և չքաջնում էին կամ բոլորովին դադարեցնում նրանց գործունէութիւնը. անհրաժեշտ է, վերջապէս, որ ադմինիստրացիայի արտակարգ լիազօրութիւնների դադարեց-

մամբ վերականգնուէր հասարակական կեանքի նորմալ՝ ընթացքը»:

Վիճակում գաւառական մամուլի ներկայացուցիչների բարեմադթութիւններին պաասախանելով, իշխան Սվետոպոլկ-Միրսկին ասել էր. «Ես միշտ կարծել եմ որ մամուլը, անկեղծօրէն և բարեացակամ ծառայելով ազգաբնակչութեան իսկական պահանջներին, կարող է անազին օգուտ բերել, նըպաստելով կառավարութեան՝ կառավարելու դժուար գործում: Ես միշտ եղել եմ գաւառական մամուլի բարեկամը, երբ նա բացարձակ, անկեղծ և բարեացակամ կերպով յայտնում է իսկական կարիքները. ես նրա բարեկամ եմ մնում և այսուհետև»:

Թուելով այն սահմանափակումները, որ զրուած են գաւառական մամուլի առաջ իրաւունքի և արդարութեան երկու տեսակ չափը մայրաքաղաքային և գաւառական մամուլի նկատմամբ, Руч. Вѣд. ցանկութիւն է յայտնում, որ ընդհանուր և հաւասար օրինական ընթիմ հաստատուէր մամուլի նկատմամբ, ըստ կարելւոյն լայն հրապարակայնութեան իրաւունք տրուէր:

Ոստելով պոլիցիայի կենտրոնական կառավարութեան կազմակերպութեան մասին յարգելի թերթը ցանկութիւն է յայտնում, որ անհատների քաղաքացիական իրաւունքների սահմանափակումները տեղի չունենան առանց դատարանի որոշման:

Ընդհանուր յուսալից տրամադրութեան արձագանգ տուաւ և Կովկասի մայրաքաղաքը. Թիֆլիսի քաղաքային խորհրդարանը (դումա) միաձայն վճռեց ուղարկել հետեւեալ շնորհաւորական հեռագիրը ներքին գործոց մինիստրին.

«Ձեր Պայծառափայլութեան նշանակալից ճառի մէջ արտայայտած բարձր մարդասիրական և իմաստուն սկզբունքները աւետում են նոր դարեշրջանի գալուստը: Կառավարութեան վստահութիւնը դէպի ինքնավարութեան օրգանները և սրանց ու կենտրոնական վարչութեան մէջ միութիւն հաստատելը հնարաւորութիւն կը տան մեր Պետութեան բոլոր կուսական ոյժերին երևան դալ և առաջ կը բերեն նրա անսպառ զօրութեան զարգացումը ու բարգաւաճումը: Թիֆլիսի դուման, իբրև ներկայացուցիչ այն քաղաքի, որ կարող է հպարտ լինել այն բանով, որ Դուք այստեղ անց էք կացրել Ձեր մանկական տարիները, ողջունելով Ձեր վստահելի և բարեացակամ վերաբերմունքը դէպի ծայրերկրի բազմացեղ ազգաբնակչութիւնը, որը միշտ ցանկացել է ապրել մի ընդհանուր կեանքով ուսւ ժողովրդի միւս մասի հետ, իր միաձայն որոշումով լիազօրութիւն տուեց ինձ արտայայտել Ձերդ Պայծառափայլութեան

անկեղծ երախտագիտութիւն և ցանկութիւն, որ այն իշխանութիւնը, որով Դուք օժտուած էք Բարձրագոյն կամքով, տայ Ձեզ հնարաւորութիւն միացնել համաձայն աշխատանքի մէջ հասարակական բոլոր ոյժերը արդիւնաւէտ գործադրութեան համար ժողովրդի օգտին և մեր թանգագին հայրենիքի բարօրութեան:

Սեպտեմբեր 21 և 22-ին Թիֆլիսի դատաստանական պալատի I մասում դռնփակ քննուում էր Տէր-Առաքելեան և Տէր-Մինասեան քահանաների և Կարսի 28 բնակիչների գործը, որոնք մեղադրուում էին պատժական օրէնսդրքի 268-դ յօդուածի հիման վրայ: Երևանի նահանգական դատարանը նրանցից 24-ին մեղաւոր էր ճանաչել և դատապարտել հեռակալ կերպով. 12-ին զրկել բոլոր անձնական և այլ իրաւունքներից և ուղարկել կալանաւորների բաժինը, ուր երկու քահանաները մնալու էին 2¹/₃-ական տարի ամենմէկը, իսկ 10-ը հոգին երկ-երկու տարի. 3-ին բանտարկել 15-ական ամիս ամենմէկին. 7-ին բանտարկել երեք-երեք ամիս, առանց իրաւունքներից զրկելու, և 2-ին՝ երկ-երկու ամիս, նոյնպէս առանց իրաւունքներից զրկելու: Դատաստանական Պալատը Բարձրագոյն մանիֆեստը գործադրելով՝ դատապարտեց երկու քահանաներին մէկ-մէկ տարով կալանաւորների բաժնին, 10 մեղադրեալներին 8-ական ամիս կալանաւորների բաժնին և 3 հոգու էլ 3-ական ամիս բանտարկութեան, իսկ մնացածներին անմեղ ճանաչեց: Մեղադրեալներին պաշտպանում էին Մոսկուայի երդուեալ հաւատարմատարներ Ն. Կ. Մուրաւիևը և Ա. Ֆ. Ստալը, իսկ Թիֆլիսից Տ. Ն. Յովհաննիսեան երդուեալ հաւատարմատարը:

—Հրատարակուած է Բարձրագոյն ուկադ սեպտ. 25-ին. ներքին գործերի մինիստրի օգնականին, որ ժանդարմների առանձին կորպուսի գլխաւորն է, յատկացրուած է ներքին գործերի մինիստրի օգնականի, ոստիկանութեան կառավարչի կոչումները՝ դնելով նրա վրայ ներքին գործերի բարձր ղեկավարութեան տակ մինիստրութեան տեղական կենտրոնական հիմնարկութիւններում կատարուող այն գործերի վարչութիւնը, որոնք վերաբերուում են ոճիրների առաջն առնելուն և պատիժներին, նոյնպէս և հասարակական ապահովութեան և կարգի պահպանութեանը:

—Անդրկովկասի շէյխ-իւլ-իսլամը և մուֆտին միասին խնդիր են առնել Կովկասի գլխաւոր վարչութեանը, որ թոյլատրուի բաց անել Թիֆլիսում մահմէդականների հոգևոր սեմինարիա, որ կրելու է Թագաթառանդ Յեսարևիչի անունը:

Դպրոցական այդ հիմնարկութեան նպատակը լինելու է պատը-
րաստել ինտելիգենտ, կրթուած մոլլաներ, որոնց անքան զօ-
րեղ կարիք է զգացուլ մահմէդական խաւար հասարակութեան
մէջ: Այդ գործի նախաձեռնութիւնը պատկանում է Անդրկով-
կասի շէյխ-իւլ-իսլամին, որը միջանի ժամանակ առաջ իր ի-
րաւասութեան տակ գտնուած Ալիևի դպրոցն ուղղում էր վերա-
ծել 6—դասարանեան միջնակարգ դպրոցի՝ մոլլաներ և թարգ-
մաններ պատրաստելու համար. այդ առիթով նա արդէն կազ-
մել էր մանրամասն ծրագիր: Իսկ այժմ հոգևոր նոր հիմնուե-
լիք սեմինարիայի ծախքերի համար մտադրութիւն կայ գործ
ածելու Անդրկովկասի մզկիթների «վակուլֆ»-ը կամ եկեղեցա-
պատկան հողերի եկամուտները:

— Սեպտեմբերի 28-ին Թիֆլիսի դատաստանական պալա-
տում դռնփակ քննուում էր Աշտարակ գիւղի բնակիչներ կա-
րապետ Ատոմեանի, Գարեգին Ամիրեանի և Արմենակ Փարվան-
եանի գործը, որոնք մեղադրուում էին Պատժական Օրէնսգրքի
263 յօդուածով: Գործը անցել էր պալատը Երևանի նահանգա-
կան դատարանի պրոկուրորի և մեղադրեալների բողոքի հա-
մաձայն: Երևանի նահանգական դատարանը դատապարտել
էր մեղադրեալներին պատժական օրէնսգրքի 271 յօդուածով
վեց-վեց ամիս բանտարկութեան: Թիֆլիսի դատաստանական
պալատը դռնբաց յայտարարած վճռով հաստատեց դատարանի
վճիռը և գործադրելով Բարձրագոյն մանիֆեստը՝ դատապար-
տեց մեղադրեալներին երկու ամիս բանտարկութեան: Պալա-
տում մեղադրում էր պալատի պրոկուրորի՝ օգնական Ա. Ֆ.
Միկալին, որ հրաժարուեց Երևանի նահանգական դատարանի
պրոկուրորի բողոքից: Մեղադրեալներին պաշտպանում էր
երգուեալ հաւատարմատար Տ. Յովհաննիսեան:

— „Кавк.“ պաշտօնական լրագրի ասելով ներկայումս ա-
ւարտուած է արդէն Նւլախից Նուխի եւ Նւլախից Շուշի կա-
ռուցուելիք երկաթուղու գծի տեխնիկական և տնտեսական հե-
տազօտութիւնը: Հաւաքուած վիճակագրական տեղեկութիւննե-
րը ցոյց են տալիս, որ շատ մեծ քանակութեամբ ապրանք կը
լինի այդ գծով փոխադրելու համար. այդ պատճառով էլ
յոյս կայ, որ շատ շուտով կարող է այդ գծի շինութիւնն իրա-
կանանալ: Գիծն ունենալու է լոկ առևտրական նշանակութիւն:
Տեխնիկական տեսակէտից նրա կառուցումը ոչ մի առանձին
դժուարութիւն չէ ներկայացնում: